ԱՋԱԼԱՋԵԲ[1] / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Լինըմ են, չեն լինըմ, մի մարթ ու կնիկ են լինըմ։ Ըտրանք ունենըմ են մի տղա։ Հերը գնըմ ա տավարը, իսկ տղին ուղարկըմ ա ֆորթերը, ու ըտրանց հախով մի կերպ ապրըմ են։ Շատ ա անց կենըմ, քիչ, մի գիշեր էլ տղին էրազ ա գալի, թե թաքավորի հուրի-մալք աղջկանը ուզիլ տեն։ Հենց որ լիսը բաց ա ըլըմ, տղեն հորն ասըմ ա.— Այ հեր, ես ուզըմ եմ մեր քաղաքի թաքավորի աղջիկը։ Հերը թե.— Այ բալա, մենք տվարած մարդիկ ենք, աղքատ, բա թաքավորը մեզ աղջիկ կտա՞։
Տղեն՝ չէ ու չէ, թե.— Անպայման ուզիլ տենք։ Հեր ու տղա շատ են վիճըմ, տղեն ֆորթը բրախըմ ա, թե՝ «Ես թաքավորի փեսա տեմ դառնալ»։ Օրի մի օրը էդ մարթը տղին լսըմ ա ու գնըմ ա թաքավորի խնամախոսի քարի վրա նստըմ։ Դե թաքավորութին ա, հո մհետից նրա դուռը չե՞ն գնա։ Քաղաքի մեջ տարածվըմ ա, թե տըվարածը էկել ա թաքավորի խնամախոսի քարի վրա նստել։ Խաբարը հասնըմ ա թաքավորին։ Թաքավորը նազիր-վեզիրներին ուղարկըմ ա, տենան, թե էդ ի՞նչ բան ա, որ տվարածը խնամխոսի քարի վրա նստել ա։ Նազիր վեզըրնին տվարածին կանչըմ են թաքավորի մոտ։
— Հը՛, ի՞նչ կա, էդ ո՞ր քամին ա քեզ բերել իմ դուռը,— հարցնըմ ա թաքավորը։
Տվարածը, առանցի մի քաշվելու, ասըմ ա. — Թաքավորն ապրած կենա, էկել եմ տղիս հըմար աղջիկդ ուզելու։
Էս որ լսըմ ա, թաքավորը շատ ա զարմանըմ. ինքը թաքավոր, տվարածը գա աղջկանը ուզելո՞ւ։
«Հը՞, չլի էս ա լավ»— մտածըմ ա թաքավորը ու տվարածի առաջ սի պահանջ ա դնըմ։
— Դու կբերես Աջալաջեիբ։ Իրեք տարվա ընթացքում թե չբերիր, քու գլուխն էլ տի կտրել տամ, տղիդ գլուխն էլ։ Խեղճ տվարածը փոր ու փոշման գալիս ա տուն, չի էլ հսկանըմ թե էդ Աջալաջեիբ ասած բանը ի՞նչ ա։
— Ի՞նչ կա, ի՞նչ չկա,— հարցնըմ ա կինը։
— Ինչ տի ըլի, չոռը մեր պինչը,— ջգրված ասըմ ա տվարածը ու պատմըմ ա, որ թաքավորը էս ու էս տեսակ պահանջ ա դրել։
Տվարածը խելագարվածի պես մտածըմ ա, թե ի՞նչ հնար գտնի։ Տավարը բրախըմ ա, զաթի ֆորթը շուտ են բրախել։ Կնգա հետ խոսք ու մին են անըմ, թե ինչ անի էդ Աջալաջեիբ ասված բանը գտնի՝ բերի, տենան ի՞նչ բան ա, չունքի իրանց բախտը ըտրանից ա կախված։ Օրի մի օրը էդ տվարածս մի կտոր հաց ա վերցնըմ ու ճամբա ընգնըմ։ Շատ ա գնըմ, քիչ, հասնըմ ա մի քաղաք։ Քաղաքի միջովը ձեն ածելով գնըմ ա։
— Ա՛յ Աջալաջեիբ ծախո՛ղ, ա՛յ Աջալաջեիբ ծախո՛ղ։
Ժողովուրդը զարմանըմ ա, թե էդ ի՞նչ բան ա Աջալաջեիբը։
Վերջիվերջո, եփ որ քաղաքի ծայրըմ ձեն ածելեն գնալիս ա ըլըմ, մի պառավ մարդ, առուտուրականի մինը, ըտրան կանչըմ ա, թե արի ինձ մոտ։
— Էդ ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել, էդ ինչ բան ա,— հարցնըմ ա առուտուրականը։
Տվարածը պատմըմ ա թաքավորի պահանջի մասին։

---

[1] Աներևույթ բան – Ծ. Բ.։

— Դե որ էդպես ա, քեզ կասեմ, թե Աջալաջեիբը որդի ա,— ասըմ ա էդ առուտուրական չարչին։ — Վա՛յ, գլխիդ մատաղ, ասա, թե չէ՝ իմ ու որթուս գլուխը կթըռցնեն,— սկսըմ ա խնդրել տվարածը։
Առուտուրականն ասըմ ա.— Այ մա՛րդ, էն բարձր սարը տեսնըմ ե՞ս, անց կկենաս, մի աղբիր աղաքդ կգա, դա թթու աղբիր ա, որ խմես, տի ասես՝ ուխա՛յ։ Հենց ըտիան Աջալաջեիբը դուս կգա ու տղիդ կտաս դրան աշակերտ, Աջալաջեիբը փեշակ ա, ծախու չի։
Տվարածը քրտնամխած եդ ա գալի, տղին վերցնըմ ու գնըմ էդ սարը։ Տենըմ ա աղբիրը, ջուրը խմըմ ա՝ թթու, լեղի, համա ճարը կտրած ասըմ ա.— Ուխա՛յ։
Էդ մոմենտին դուս ա գալի մի մարդ ու հարցնըմ։
— Հը՛, ասա՛, ոզի, ուզածդ տամ,— ասըմ ա հայտնված մարդը։— Ես Աջալաջեիբ եմ ուզըմ,— պատասխանըմ ա տվարածը։
— Տղիդ կտաս աշակերտ, իրեք տարի կսվորցնեմ կդառնա Աջալաջեիբ։ Տասնմին տղա ունեմ, դա էլ թող ըլի տասներկուսը։
Տվարածը տղին թողնըմ ա, ու ինքը վերադառնըմ։
Գալիս ա ու տավարը գնըմ, իսկ ֆորթն էլ ուրիշ մի ըրեխա յա պահըմ։
Շատ ա անցկացած ըլըմ, քիչ, օրը տարի ա թվըմ։ Մի օր էլ կնիկը մարդուն ասըմ ա.— Գնա տղիս բեր, թաքավորի ասածը չի ըլի։
Մարդու ճարը որ կտրվըմ ա, դե ջիգյար ա էլի, գնըմ ա տղին բերելու։ Հասնըմ ա աղբրի մոտ, խմըմ ա ջրիցը ու ասըմ.— Ուխա՛յ։
Աջալաջեիբը դուս ա գալի ու հարցնըմ թե.— Ի՞նչ կա։
— Խնդրըմ եմ տղիս տաս՝ տանեմ, ապրելու հնար չունեմ,— ասըմ ա տվարածը։
— Այ մարդ, իրեք ամիս դեռ չկա, իրեք տարի տի սվորի։ Ըսպասի ներս մտնեմ, կգամ, պատասխան կտամ։ Քիչ եդը Աջալաջեիբը դուս ա գալի, տվարածին մի հին սրբիչ ա տալի ու հետը ասըմ.— Սրբիչը ամեն ինչ կտա, ինչ որ ցանկանաս, խնդրես, համա սրբիչը ոչ մի մարդու չտաս։ Էդ մարդը վերցնըմ ա սրբիչն ու ուրախ-ուրախ վերադառնըմ։ Ճամբի կեսին, մարդ ա էլի, սովըմ ա, նստըմ ա ու ասըմ.- Սրբիչ ջան, մի ճաշ բեր, ուտեմ։ Ճաշը դուս ա գալի, մարդը ուտըմ ա ու զարմանըմ։ Ուրախ-ուրախ ճամբեն շարունակըմ ա դբա տուն։
— Այ մարդ, մեր տղին ընչի՞ չբերիր,— հարցնըմ ա կնիկը։
— Ճամփա պահի, այ կնիկ, թող տղեն սըվորի, մենք էլ կապրենք,— սիրտ ա տալի տվարածը։
Արդեն մութն ա ըլըմ, տվարածը սրբիչը դնըմ ա ըստոլին ու ասըմ.— Սրբիչ ջան, թաքավորի լայաղական ճաշ բեր, ուտենք։
Աչքդ բարին տենա, ինչ նրանք տենըմ են։
— Փա՛ռք քեզ, աստված,— ուրախանըմ են մարդ ու կնիկ ու ամեն օր առոք-փառոք ուտըմ են, ինչ որ սիրտները ցանկանըմ ա։
Էդ մարդը է՛լ տավարը չի գնըմ, հարստանըմ ա, տավար-մավարն ընչի՞ն ա պետք, ամեն ինչը բոլ։
Մի օր էլ էս մարդը խնդրըմ ա.— Սրբիչ ջան, էնպես շենք բեր, որ թաքավորի պալատին շվաք անի։
Դե մարդի աչքը ծակ ա, ամեն ընչի թամահ ա անըմ, ուզըմ ա էլածի վրա էլ ավելացնի։
Սրբիչն էլ իրա հունարը շանց ա տալիս։
Թաքավորը տենըմ ա պալատն ու զարմանըմ։ Խաբարը ընգնըմ ա, թե տվարածի տան տեղն ա էդ պալատը շինվել։
Մի օր էլ կնիկը մարդին ասըմ ա թե.— Թաքավորին հրավիրի
մեր տուն իրա մարդկերանցով, բարեկամ մարդիկ ենք, դոստ կա, դուշման կա։

Մարդը գնում ա խնամախոսի քարի վրա նստում։ Ընդան տանում են թաքավորի մոտ։
Դա թե.— Թաքավորն ապրած կենա, իմ ղոնախն ես, քու մարդկերանցով, առավոտը կգաս իմ տունը։
Թաքավորը մերժում չի ու էքսի օրը, առավոտը իրա մարդկերանցովը գալիս ա տվարածի տուն։
Գալիս ա ու տենում ծուխ-մուխ չկա, զարմանում ա, թե իրանց ոնց տի ճանապարհ գցի։
Հենց որ նստում են, տվարածը թաքուն ասում ա.— Սրբիչ ջան, թաքավորի լայաղական ճաշ բեր՝ իրա բոլոր արքով-կարքով։
Թաքավորը իրա մարդկանց հետ որ ճաշում, վերջացնում ա, էդ մարդը ասում ա.— Ամեն ինչ վեցնեն, տանեն, ոչ մի բան չընթողան։
Թաքավորը գնում ա իրան պալատն ու որոշում ա էդ մարդուն կանչել, իմանալ, թե բանը ընչումն ա։
Տվարածը գնում ա թաքավորի մոտ։ Դեսից-դենից խոսալուց եղը, թաքավորը շատ որ խնդրում ա, էդ հայվանի մինը գաղտնիքն ասում ա.— Այ խնամի՛,— ասում ա թաքավորը,— էդ սրբիչը տուր ինձ, թաքավոր մարդ եմ, պատերազմ եմ գնում, ինձ շատ պետք կգա, քեզ ոսկի կտամ, կապրես։
Թաքավորը, որ շատ լիզու ա թափում, տվարածը համաձայնվում ա, մի քանի ոսկի ա վերցնում ու սրբիչը տալիս թաքավորին։ Ըստի են ասել. «Բոշի եղը, որ շատ ա ըլում, քսում ա քմակին»։
Մի առավոտ էլ մարդ ու կնիկ վեր են կենում, ի՛նչ տենան, պալատը չկա, էլի իրանց տունը։ Մի քանի օրից եղը ոսկին հատնում ա, դրանք նստում են դառ ու դարդակ։ Էդ մարդը ճարը կտրած էլի գնում ա տավարը։
Օրերն անց են կենում, իսկ կնիկը մարդուց մի գլուխ պահանջում ա, թե. — Չէ՛ ու չէ՛, գնա տղիս բեր, թող ֆորթերը գնա, կարգին ապրենք, մին ա թաքավորը մեզ աղջիկ տվողը չի։
Հերը էլի գնում ա տղին ուզում, Աջալաջեիբը հին ջուղաբն ա տալի, համա էս անգամ էրկանքնի ա տալի ու թամբահ անում, որ ուրշի ձեռք չգցի։
Ճամբին էս տվարածը, որ սովում ա, ասում ա.— Էրկանքնի ջան, էրկանքնի, մի ճաշ բեր ուտեմ։
Ճաշը դուս ա գալի, էդ մարդը ուտում ա ու իրա ստեղծող աստծուն փառք տալիս։
Կշտանալուց եղը ճամբա յա ընգնում դբա իրանց տունը։
— Այ մարդ, մեր տղին ինչի չբերիր,— հարցնում ա կնիկը։
— Ճամբա պահի, այ կնիկ, թող տղեն սվորի, մենք էլ կապրենք,— նորից սիրտ ա տալի տվարածը։
Ռիգունը տվարածը էրկանքնին դնում ա ըստոլին ու ասում ա.— Էրկանքնի ջան, էրկանքնի, թաքավորի լայաղական ճաշ բեր,
ուտենք։
Ընդանք ուրախանում են ու կուշտ կուշտ ուտում։
Ամեն օր մարդ ու կնիկ թաքավորի լայաղական ճաշեր են ուտում։ Թազա հարստանում են, էդ մարդը էլի տավարը բրախում ա։ Էն որ ասում են. «Ամեն ինչ աչքածակութինից ա ըլում», սրանցն ա։
Տավարը բրախելուց եղը մի ռիգուն դա էրկանքներին ասում ա.— Էրկանքնի ջան, էրկանքնի, էնպես շենք բեր, որ թաքավորի պալատին շվաք անի։
Էրկանքնին իրանց հունարը շանց են տալի։ Թաքավորը էքսի օրը առավոտը տենում ա պալատն ու գլխի ընգնում, որ տվարածը կա-չկա, մի հունար ա գտել, մտածում ա, թե ոնց անի, ձեռ գցի։ Ընդուր են ասել. «Բանը թեզ վի կենալը չի, բանը բախտի բահելն ա»։

Տվարածի կնիկը մի օր մարդին ասըմ ա.— Այ մարդ, թաքավորին կանչի մեր տուն իրա մարդկերանցով, բարեկամ մարդ ենք, դոստ կա, դուշման կա։
Աղբորս ասեմ, տվարածը էլի գնըմ ա թաքավորի խնամախոսի քարի վրա նստրմ։ Ընտրան էլի տանըմ են թաքավորի մոտ։
Դա թե.— Թաքավորն ապրած կենա, իմ ղոնախն ես, քո մարդկերանցով առավոտը կգաս իմ տունը։
Թաքավորին էլ ըթենց բան էր պետք։
Գալիս են խնամի տվարածի տունը, էլի տենըմ են, որ ծուխ-մուխ չկա, համա թաքավորն էս անգամ չի զրմանըմ։ Հենց որ նստըմ են, տվարածը թաքուն ասըմ ա.— Էրկանքնի ջան, էրկանքնի, թաքավորին լայաղական ճաշ բեր իրա բոլոր արքով-կարգով։
Թաքավորը իրա մարդկերանց հետ որ ճաշըմ են վերջացնըմ, տվարածն ասըմ ա, թե.— Ամեն ինչ վերցնեն, տանեն, ոչ մի բան չթողան։
Թաքավորը գնըմ ա իրա պալատն ու տվարածին կանչըմ մոտը։ Էլի դեսից-դենից խոսըմ են, վերջը թաքավորն իմանըմ ա, որ հունարը էրկանքների մեջն ա։
— Այ խնամի,— ասըմ ա թաքավորը,— էդ էրկանքնին տուր ինձ, թաքավոր մարդ եմ, պատերազմ եմ գնըմ, ինձ շատ պետք կգա, քեզ էլ ոսկի կտամ, կապրես։
Տվարածը համաձայնվըմ ա, էրկանքնին տալիս ա թաքավորին, ոսկին առնըմ, գալի տուն։
Մարդ ու կնիկ առավոտը վեր են կենըմ, տենըմ են իրանց պալատը չկա, հին տան մեջ են, մի քանի ամսից եդն էլ ոսկին հատնըմ ա, էլի նստըմ են դափ-դարդակ։
Էդ մարդը ճարը կտրած էլի գնըմ ա տավարը։ Շատ ա անց կենըմ, քիչ, օրերից մի օր էլ տվարածի կնիկը մարդից պահանջըմ ա, որ գնա տղին բերի։
Տվարածը ճամբա յա ընկնըմ, գնըմ հասնըմ ա աղբրի մոտ։ Ջրերը խմըմ ա ու ասըմ.— Ուխա՛յ։
Աջալաջեիբը դուս ա գալի ու տվարածին ասըմ.— Այ մարդ, գլուխ չունես վրեդ, ընչի ես տվել թաքավորին, դեռ տղեդ ոչինչ չի սվորել, որ էդպես ա, արի տղիդ տար։
Ասըմ ա ու իրա հետևից տանըմ ներս։
— Գնանք, տղիդ տի ճանաչես, թե չէ՝ գլուխդ կթռցնեմ,— ասըմ ա Աջալաջեիբը։
Հենց որ Աջալաջեիբը սենյակիցը դուս ա գալի, նրա կնիկը տվարածին ասըմ ա.— Այ մարդ, տղիդ չես ճանաչի, մարդըս գլուխդ կթռցնի, ես գուլպա գործելով կգնամ տղիդ մոտ կկանգնեմ, դու կգաս կճանաչես։
Աջալաջեիբը վերադառնըմ ա ու տվարածին տանըմ տղերանց սենյակը։ Էդ մարդը նայըմ ա տղերանցը, տենըմ ա բոլորն էլ մի տեսակ շորեր ունեն ու նստած դաս են սվորըմ, տղին չի ճանաչըմ.
— Դե՛ տղիդ ճանանչի,— ասըմ ա Աջալաջեիբը։
Էդ վախտը կնիկը տղի մոտ կանգնած գուլպա յա գործըմ, հերը գնըմ ա որդուն բռնըմ։
— Դե որ տղիդ ճանաչեցիր, վերցրու տար,— ասըմ ա Աջալաջեիբը ու հարցնըմ տղերանցը, թե. իրանց «Ընկերը բան ա՞ սըվորել»։
Տղերքը պատասխանըմ են.— Չէ՛, ի՞նչ ա սըվորել որ։
Հեր ու տղա դուս են գալիս գետնի տակիցն ու ճամբա ընգնըմ դրա իրանց քաղաքը։
Ճամբին տղեն հորն ասըմ ա.— Դու գնա, ես գալիս եմ։
Տղեն թաքուն դառնըմ ա խնձոր ու գլորվելեն, հոր առաջն ընկած, գնըմ ա։ Հերը քանի ուզըմ ա խնձորը բռնի, չի կարըմ։ Մեկ էլ խնձորը կորչըմ ա։ Հերը հետ ա նայըմ, տենըմ ա տղեն գալիս ա։
— Այ տղա շուտ եկած ըլեիր, խնձորը կբռնեինք,— ասըմ ա հերն ու պատմըմ, թե խնձորը ոնց հայտնվեց ու անհետացավ։

— Այ հեր, աչքիդ ա ըրևացել,— ասըմ ա տղեն ու հերն էլ հավատըմ ա, որ աչքին ա ըրևացել։
Տղեն քիչ եդը դառնըմ ա ջորի։ Հերը ուզըմ ա բռնի, չի կարըմ, ջորին կորրչմ ա։ Հերը մեկ էլ հետ ա նայըմ, տեսնըմ ա տղեն տրեխների թելն ա կապըմ։
— Այ տղա, ուշացար, մի ջորի կար, գայիր՝ կբռնեինք,— ափսոսում ա հերը։
— Այ հեր, աչքիդ ա ըրևացել,— ասըմ ա տղեն, ու հերը նորից հըվատըմ ա, որ աչքին ա ըրևացել։
Մինչի տուն հասնելը տղեն դառնըմ ա ձի, աղվես, նապաստակ և ուրիշ բաներ ու միշտ էլ հորը հավատացնում ա, որ դրանք աչքին են ըրևացել։
Որ մոդենըմ են իրանց տանը ու հասնըմ տուն, տղեն հորն ասըմ ա.— Այ հեր, էդ բոլորը ես ի։ Հերը շատ ա զարմանըմ ու հավատըմ ա։ Տղեն հորը ասըմ ա.— Ես կդառնամ ձի, ջորի, դու կծախես, բայց սանձերը հետ կբերես, մեկ էլ քյոսա մարդու վրա չծախես։
Էդպես հերը ծախըմ ա, տղեն հետ ա գալի։ Դրանք հարստանըմ են։ Առնողնին սանձերով կապըմ են գոմում, բայց գնըմ, տեսնըմ են չկա։ Խաբարը հասնըմ ա Աջալաջեիբ վարպետին։ Սա շորերը փոխըմ ա, գալիս ա բազար, տեսնըմ ա ձի են ծախըմ, ճանաչըմ ա, որ իրա աշակերտն ա, զարմանըմ ա, թե էդ եփ ա Աջալաջեիբ դառել, մոտենըմ ա ու հարցնըմ.— Հը՛, աղբերացու, ո՞նց ես ծախում ձիդ։
— Վեց թումանի,— ասըմ ա տվարածը։
— Թե սանձերը հետը կծախես, վեց թուման կտամ,— ասըմ ա քյոսան։
Ըստիան, ընդիան ասըմ են.— Ա՛յ մարդ, լավ գին ա տալի, ընչիդ պետքն ա էդ հին սանձերը։ Տվարածը համաձայնվըմ ա ու վեց թումանով սանձն էլ հետը ձին ծախըմ ա, համա չի տեսնըմ, որ ձիու աչքերից արցունք ա թափվըմ։
Քյոսան ուրախանըմ ա, որ աշակերտը իրա ձեռքն ընգավ, չունքի չէր ուզըմ, որ իրա աշակերտնին Աջալաջեիբ դառնային, ու տասներկուսի մեջ մենակ սա յա դառած ըլըմ, էն էլ ինքը իմանալիս չի ըլըմ։
Էսպես սանձելով տանըմ ա կապըմ ա գոմըմը ու գնըմ իրա սենյակը, որ թուրը վերցնի, գա սպանի։
Աջալաջեիբի կնիկը, որ բարի կնիկ էր ու էդ տղին շատ էր սիրըմ, հասկանըմ ա, որ նա յա, դաստի տանը ծուխ ա տալի։ Հենց որ Աջալաջեիբը նկատըմ ա ու վազըմ տուն, կնիկը թաքուն դուս ա գալի, գնըմ ա սանձը արձակըմ։
Տղեն փախչըմ ա։ Աջալաջեիբը տեսնըմ ա տղեն չկա, ընգնըմ ա նրա հետևից։ Տղեն ծիտ ա դառնըմ, Աջալաջեիբը՝ արծիվ, աշակերտը՝ նապաստակ, վարպետը՝ գել ու էդպես շարունակ, մինչև որ հասնըմ են տղի երգիրը։ Տղեն մի փունջ ծաղիկ ա դառնըմ ու ընգնըմ թաքավորի ձեռքի մեջ, իսկ Աջալաջեիբը դառնըմ ա կույր աշուղ, սկըմ ա երգելը ու խնդրըմ ա թաքավորին, թե՝ «Ծաղիկը տուր, հոտ քաշեմ»։
— Քու ի՞նչ լայաղական ա,— ասըմ ա թաքավորը։
Բայց որ շատ լավ երգըմ ա, թաքավորը համաձայնվըմ ա ու ծաղկի փունջը տալիս ա աշուղին։ Ծաղկի փունջը դառնըմ ա կորեկ, թափվըմ ա պոլին, իսկ աշուղը դառնըմ ա որձակ ու սկսըմ կորեկն ուտելը։ Հենց որ մի հատիկ ա մնըմ, էդ հատիկը դառնըմ ա ասեղ, իսկ որձակը՝ թել ու մտնըմ ասեղի ծակի մեջ։ Էդ ժամանակ բուխարին վառվելիս ա ըլըմ, ասեղը մտնըմ ա կրակի մեջ, թելը վառվըմ ա։ Հետո ասեղըդառնըմ ա մարդ ու թաքավորը տեսնըմ ա, որ էդ տվարածի տղեն ա։ Ինքն էդ բոլորը տեսնըմ ա ու զարմանըմ։
— Թաքավորն ապրած կենա,— ասըմ ա տղեն,— Աջալաջեիբը հենց ես եմ, աղջիկդ ինձ տուր, իրեք տարին լրացել ա։
Թաքավորը համաձայնվըմ ա ու աղջկանը տալի տվարածի տղին։

Յոթ օր ու գշեր հրսանիք են անըմ։
Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։
Երկնքից իրեք խնձոր վեր գա՝ մինը հեքիաթն ասողին, մինը լսողին, մինն էլ՝ ինձ։